

Մանգրամի Էֆեմար

Մ Ի Ի Ն Ա Տ Ի Ի

ԱՐՄԱՐԸ ԲՕԼԻԹԵԳԸՅՅԵ ՎԵ ՄԻՎԱՏՏԸ ՍԱՅԻՐԷ

ԲԻՆՆԻ ՍԵՆԵ

1868 ՓԵՏՐՎԱՐ 13 ՍՈԼԸ ՍԱՊԱՀ

ՆԻՄԵՐՈ 393

Բնակավայրի Էֆեմարի համարը 300
Բնակավայրի Էֆեմարի համարը 300
Բնակավայրի Էֆեմարի համարը 300

Բնակավայրի Էֆեմարի համարը 300
Բնակավայրի Էֆեմարի համարը 300
Բնակավայրի Էֆեմարի համարը 300

Բնակավայրի Էֆեմարի համարը 300
Բնակավայրի Էֆեմարի համարը 300
Բնակավայրի Էֆեմարի համարը 300

Ի Լ Ա Ն

Պու Կիւն իբի քերէրէ եանի ախշամ վէ
սապահ չըգարմատեա իիւթիմիւզ օլտու
ղունտան, պու սապահ քի նիւսիւմիւզի
Հայճա պահսլար իլէ տօլտուրմաղը վէ
ախշամքի նիւսիւմիւզիտէ թիւրքճէ մու
հիւմ պահսլար վէ հապտաիւթիւթ իլէ թէգ
եին իլէմէի ճայիւզ կէօրմիւ չիւզ տիր:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Պիթարափըղա րիայէթէն չու աթի
տէրի պահսլար նէչս իտէրիգ:

ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԵՐԱՍԵՐՈՅ ԱՆՏՔԵՐՈՒՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՐԴԻ
ՎԻՃԱԿԻՆ ՆԿԱՏՄԱՄԵ

Դեկտեմբեր 2 էն մինչեւ փետրուար 3
ազգային թերթերուն մէջ տասնէն աւելի
յօդուածներ հրատարակուած են անոնց վը
րայով, եւ ընդարձակ տեղեկութիւններ առ
նել ուղղութեամբ թէ որ արդէն անոնք կար
գացած չեն, կրնան աչքէ անցընել: Մենք ան
գրուածոց դէմ կամ ի շնորհս բան մը չըսե
լով, բուն խնդրայն վրայ քանի մը դիտո
ղութիւն պիտի ընենք:

Կոյի մը կայ հոն Առաջնորդին դէմ, հետ
խառնելով նաեւ փոխանորդն ու խել մը աշ
խարհականներ: — Կոյի մը ծագած է գողու
թեամբ բռնուած եւ վռնտուած երկու փոք
րաւորներու ամբաստանութենէն, քանի որ
Առաջնորդը Պօլիս կը գտնուի: — Ասոր վրայ
ժողովուրդին մէջ յուզմունք եւ խռովու
թիւններ ըլլայէն զատ: Պօլիս ալ շատ մը
գիրեր կը տեղան եւ Գիւթանի խմբագրին
ուղղեալ նամակ մը Պօլսոյ Սերաստացւոց
ձեռքն անցնելով, հոս ալ մեծ զայրոյթ եւ
գրգռութիւններ կը պատճառին: Ուստի ժո
ղովք եւ քննութիւն կուզեն Պօլսոյ մէջ,
ամբաստանող եւ խռովարար ճանչցուած
անձն ալ հոս բերել տալով, որուն համար
պատրիարքարանի խառն ժողովը հրամանա

գիր կառնէ Բ. Դոնէն: Յիշեալ անձին հոս
դալը չուզող մաս մըն ալ փոխանորդ դընե
լու կրլայ, եւ փոքրաւորները, ու հարկ ըլ
լարնէ ուրիշներն ալ հոս կանչուի կը խընդ
րէ: Ասոր վրայ խառն ժողովը կը վարանի եւ
Տէրութեան օրինաց պահանջմանը կը դիմէ,
բայց Պօլիս խրկուելիք անձին գալը ետ կը
ձեռքէ հոն հեռագիր քաշելով: Սերաստացի
հասարակութիւնը տակն ու վրայ կրլայ ու
մինչեւ Բ. Ատեանը դատը վերցնել կը մը
տարբէր: Ահա բանը մինչեւ հոս հասած է
հիմա:

Բայց ի՞նչ են ասոնց ամենուն պատճառը,
եթէ ոչ ութսունամեայ ալեւոր Արքեպիսկո
պոսի մը վրայ անանկ ծանր ամբաստանու
թիւններ լեւելով գրգռուած ըլլալին: Ոմանք
որ հազիւ քանի մը հոգի կելլեն, Առաջնոր
դը յանցաւոր կը ճանչնան եւ անուանարկ կը
նեն: Իսկ ժողովուրդին ընդհանրութեանը ա
սիկայ անհաւատալի երեւնալով, խռովարար
եւ գրգռիչ հեղինակը հոս բերել տալով, օ
րինաւոր դատաստանական շննութեամբ ըս
տոյգը երեւան հանել, եթէ ծերունի կըրօ
նականը անմեղ է, զրպարտիչը պատժել տալ
կուզէ, իսկ եթէ յանցաւոր, բոլոր աշխար
հի առջեւ իր արդար պատիժը հատուցանել:
Աս իրաւունք չէ, արդարութիւնն ալ ասանկ
չի պահանջեր:

Առաջնորդին դատուիլն ու ամբաստա
նութեանց իրաւ կամ անիրաւ ըլլալն հաս
կրնալ, « բոլոր » Սերաստացիք կուզեն. եւ
ասոր ո՞վ ինչ կրնայ ըսել. տարբերութիւնն
հոս է որ ոմանք չեն հաւատար որ առաջ
նորդը պիտի արդարանայ. եւ հասարակու
թեան մեծ մասն ալ որ իրենց առաջնորդին
իբր 50 տարիէ հետէ բարի վարուցը եւ գոր
ծողը վրայ համոզուած են, բնական է որ
յանկարծ մէկ քանի հոգւոյ, ան ալ զխա
ւորապէս գողութեամբ բռնուած անձերու
խօսքովը չեն կրնար իրենց այն բազմաթա
մանակեայ հաւատքը քննել կամ խախտել:
Ասիկայ իրաւ ի վերին երեսո ծայրայեղ երեւ
նայ ալ նէ, ամէն մարդ իր վրայ խորհելով
անանկ պիտի գտնէ. ուստի զարմանալ կամ

զայրանալ պէտք չէ, միայն « մէկ » միջոց
մը կայ որ բանը կը պարզէ, եւ այն է « քն
նութիւնը », ասոր ալ բոլոր հասարակու
թիւնը նախանձաւոր է եւ կը պահանջէ, ալ
ինչ: Այոք կը յամառի թէ մարդ մը շատ
տարի բարի վարուց տէր ճանչցուելէն ետեւ,
անոր բուն արժէքը կրնայ երեւան ելլել,
բայց քանի որ ատիկայ անաշուղտապէս քն
նուած եւ բանը « օրինաւոր կերպով » հաս
տատուած չէ նէ, Առաջնորդին « ներկայ չե
ղած ատենը », քանի մը հոգւոյ ըրած քնն
նութիւնն, ու մի եւ նոյն ատեն քաշալի
վարչական եւ այլ գործերն ալ յեղափոխելը,
անկողմնական մէկ հանդիսատեսի մը անգամ
համարումն ու համոզումը չկրնար գրաւել,
ո՛ւր թողունք գործոյն մէջ անմիջական պա
տիւ եւ շահ ունեցողը: Մանաւանդ որ երբ
կը խորհի ժողովուրդը թէ աս ան առաջնոր
դն է որ 50 տարիէ ի վեր վանքը չքեղաց
նելով, երկիրներ ու շէնքեր աւելցնելով եւ
պարիսպի մէջ ապահովելով 420 հազար զու
րաւի չափ եկամտի տէր ըրեր է, առանց
պարտք ձգելու ժողովուրդին վրայ, քաղա
քին մէջ փառաւոր եւ գմբեթաւոր եկեղե
ցի չինել տալու յաջողութիւն, ընկերութիւն
ներ կազմելու ջանադիր եղեր է, եւ բուն
իսկ Սերաստիոյ ազգայնոց մէջ հիմնական
տեսնուած յուսաւորութիւնն եւ ուսումնա
սիրութիւնը անոր շնորհիւ եւ տարիներէ հէ
տէ « դէմ չդնելով » թոյլ տուեր է յառաջ
երթալու, եւ այս ալ ան աստիճան որ մինչ
դեռ ուրիշ գաւառայինք կան որ տակաւին
քաղաքներնուն մէջ պարզ դպրոցներ չունին
բարեկարգ փճակի մէջ, Սերաստիոյ գիւղե
րն անգամ դպրոց եւ ուսումնականութիւն
կայ:

Ուստի կը հարցընենք, ինտո՞ր կրնայ Ասա
ուածաւախ ժողովուրդ մը ասոնց ամէնը մէկ
անց մէկդի նետելու չափ ապերախտ ըլլալով,
մէկ քանի իրեն թշնամի սեպած եւ ոմանց
արդէն պատիւն աւրուած անձանց խօսքին
ականջ դնել, ո՛ւր միայն որ իր կրօնքին
բարձրաստիճան մէկ պաշտօնէին վրայ այն
չափ ծանր արատ բերող գայթակղեցուցիչ

իրերը ստորգ հաւատայ, կըլլայ ասանկ բան, հնա՞ր է, ինտո՞ր է մարդոց դատումը տարինե-
րով մէկ բանի վրայ հաստատուելէն ետեւ, ի
քթթել տկան, աչք բանալ գոցելու չափ
ատենի մէջ բոլորովին իր հաւտեցածը ու-
րանալ, ջրել եւ թշնամի սեպածին հետ մէկ
ըլլալ, ո՞ւր կըլլայ ասանկ բան, եւ ո՞ւր ե-
ղած է, Ասանկ բան մը պահանջողն ինք
կընէ՞: Ասոր ամէն մարդուն խիղճը կրնայ
պատասխան տալ:

Ուրիշ բան մ'ալ կայ որ առաջնորդին
դէմ եւ ի նորին եղող ամէնքն նոյն քաղա-
քին եւ գաւառին մէջ հայրենակից՝ ազգակից
մարդիկ են. առաջնորդն անկէ ելլէ չեղէ,
անոնք տունով տեղով հոն են, եւ հոն պի-
տի մնան. ի՞նչ հարկ կայ անոնք իրարու
դէմ հանել եւ իրարու ատելի ընել, գրգը-
ռութիւն ձգելով անոնց մէջ. մանաւանդ
խնդիրէն դուրս բաներ մէջ մտնելով...
Ճշմարիտ ազգասէր մը ասանկ բանի մէջ
մատ չունենար, քանզի իր ձգած որոմը,
ո՞վ գիտէ որչափ պիտի ածի ու տարածի
եւ ինչ բաներու պատճառ պիտի ըլլայ, լու-
սաւորեալ ճշմարիտ ազգասէր մը յեղափոխու-
թիւնը մտքերու լուսաւորութեան մէջ մը-
ցընել կը ջանայ, « Պօլիս ըլլայ թէ դուրս
գացած ըլլայ, » հայրենակից եւ ազգակից
եղողներուն չափ եւ կանոն ճանչցընել կը-
փափաքի ու կը յաջողի. « քակելը չա՛տ
դիւրին բան է, կրնա՞ս բան մը « չինել »:
Ի՞նչ է ջանքդ, առաջնորդին յանցաւոր ե-
րեւնալովը, անոր կողմէն բռնութիւնները
տկարացնել, անանկ չէ՞. անկէկայ դեռ Պօ-
լիս է, ու աս ալ փնտելով « չգտնուելու »
մէկ պատեհութիւն մը: Պօլիս պատրիարքա-
րան կայ. հոն ժողով կայ. եւ ան է « ձե-
ռնահաս » ժողովը. քանզի կայսերական ֆէր-
մանի տէր անձ մը գաւառները լուսած է
դատուելու. եւ ո՞վ է որ զայն պիտի դատէ,
եթէ ոչ կրօնական, կամ առ առաւելն խառն
յանձնաժողով (դոմիտիօն) մը Պատրիարքա-
կան իշխանութեամբ:

Աւստի ինչ ցաւալի բան է, առանց աս
մէն պարագաները խորհելու ելլել Սեբաս-
տիոյ 100 հազարէ աւելի միամիտ ժողո-
վուրդը եւ բոլոր Հայ հասարակութիւնը մի-
անգամայն գայթակղեցնել ծերունի եւ աշ-
խատաւոր առաջնորդի մը դէմ, որ 30 տարի
իր թէմին ժողովուրդին սէրն ու համակրու-
թիւնը եւ ազգին ու կայսերական կառավա-
րութեան պատիւն ալ ստացեր է. ա՛տ ալ
« խղճի տէր » մարդը բան չէ: Ասիկայ ը-
նողը լոկ աղգաբիրութեան համար, կամ շատ
ջերմեռանդ քրիստոնեայ մը ըլլալուն համար
ըբա՞ծ ըլլալը չկրնար կլլեցնել. մանաւանդ
որ անանկ ծայրեր կան բռնութիւնք, նոյն
նիւթոց վրայ եղած հրապարակական գրու-
թիւններուն մէջ, չեմ ըսեր մասնաւորաց
համակներն ու տեղեկութիւնները, որ ան-
կողմնակալ քննողին աչքին առջեւը շատ
բաց ու պարզ կերեւցընէ բանը, մոխիր
փչելու տեղ չմնար:

Մենք ալ որ աս դիտողութիւնները գրե-
ցինք, ոչ առաջնորդին կողմէն ենք, ոչ ալ
միւսներուն թշնամին, ամենուն միօրինակ
կըրնանք ըսել որ իրարու հետ օրօք մնան

եւ բանը օրինաւոր ատենին առջեւ դատուե-
լու յանձնեն. բայց արժան է որ ամբաստա-
նող եւ այնչափ բաներ գրող անձն ալ Պօլիս
գայ, եւ « ըսածներուն ու ըրածներուն ինք
պատասխանը տայ, փոխանորդով » յանցանք
չգտնուիր, որ իր տեղը ուրիշ մը կարգէ,
գող մը, մահապարտ մը, նոյնպէս է եւ զըր-
պարտիչ մը, ութսուն տարեկան անձի մը
կեանքը փճացուց, ի՞նչ, կուգէ որ բերնին
եկածը ըսելով, մէկը իրեն բան մը չհարցը-
նէ ու մէկու մը պատասխանատու չըլլայ:
Գիտենք որ աս է պահանջուածը. ո՞ւր մը-
նաց, որ « արդարութիւնն ալ աս » կը պա-
հանջէ: Ամբաստանող կողմը պարապ տեղը
« սպառնալիք » կընէ պատրիարքարանի,
թէ « իրենց ուղածին պէս » չընեն նէ, « Հը-
ռովմէականք եւ Բողոքականք պար պիտի
քաշեն »: Միւսներն ալ նոյնպիսի բաներ չե՛ն
կրնար ըսել. բայց քա՛ւ լիցի. ատոնք տը-
ղայական խօսքեր են, ատոնցմէ ի՞նչ կելլէ:

Գիտե՞ս ինչ է ըրածդ. ելեր ես հրա-
պարակաւ անանկ ամբաստանութիւններ կը-
նես առաջնորդին վրայ, որ ամեն այր իր
ընկերովը իր ընտանիքին վրայ կասկածով
նայելու կը պարտուորի, « համեստութեան »
կը դպչիս որ մարդոյս կեանքին հաւասար
ճանչցուած է ամեն տեղ. ետքը երբոր քեզ
հաշիւ տալու կանչեն, անկէ փախչելու հո-
մար ծռռ ու մուռ ճամբաներ կը մտնես որ
« աչք վախցընես »: Բողոքական կամ հը-
ռովմէական ըլլալով ինչո՞ւ վախ կուտաս.
արդարութեան ատենը ամենուն բաց չէ՞,
անկէ կրնա՞ս փախչիլ. ի՞նչու պարապ տեղ
վախ կուտաս. « ալապիւճիկ » կը ցուցընես.
ատոնց ինչ հարկ կայ, կրնաս մինչեւ ան-
գամ ուրիշ դուռներ ալ գարնել, բայց բնա-
լէս կրնար Տէրութեան օրէնքներէն ազա-
տիլ, քու խոսվարար եւ զրպարտիչ ըլլա-
լովդ:

Արդ ատանկ փուճ ու փտտած խօսքերը
մէկդի ձգելով, « եպիսկոպոսեան » ըսածնե-
րուդ խօսքը լսէ. Անոնք կրնան թէ մենք
« ըրզնի նամուսի » տէր մարդ ենք. ընտա-
նիք ու զաւկներ ունինք, որոնց ամէնը
մէկ ջուրով լուացեր ես. թէ որ այդ կար-
գաւորը այնքան օտակալի յանցաւոր մ'է,
թող քանը երեւան գայ ու արդար պատիժն
ընդունի, « Բայց թէ որ չէ », անտարակոյս
է որ այնչափ խեղճներն տալն ու վրայ ը-
նող եւ այնքան տուններ ու տնհատներ, չը-
սեմ ընտանիք եւ ամուսին, իրարու դէմ
թշնամի ցուցընող եւ ատելութիւն սերմանող
ու զրգութիւններու « պատճառ տուող
խոսվարար մը » բուն իսկ Տէրութեան օրէն-
քովն ալ պատժոյ արժանի է որ չըկրնար
փախչիլ, ինչպէս որ սա եւ արդարութեան
պահանջումն ալ ան է. « խնդիրն ալ ան է »:

Վերջապէս կրնենք որ, քանի որ դա-
տը դեռ պատրիարքարանէն դուրս ելած չէ,
աղէկ կըլլայ որ « իրաւունքի ականջ տա-
լով, չէ թէ միայն Ամբաստանողն, այլ ա-
մեն Հայուն, եւ բուն իսկ « արդարութեան »
համար, աս բանը գլուխ ելլէ անկողմնա-
կան քննութեամբ ու կիրքերն ալ հանդար-
տին:

Հօս կը լմնայ մեր այս գիտողութիւն:

ները, եւ հոս է խնդրոյ ներկայ վիճակը. Թէ
որ հարկ ըլլայ, ուրիշ առթով տակաւին
գրելիքներ կան առնց վրայ հիմա այսչափ.
1868 փետր. 9. Պօլիս, Ղալաթիա.

Խել մը Ամբաստանիք.

— Հետեւեալ յօդուածը թէեւ 12
օրէ ի վեր եկած է, եւ նիւթերու շա-
տու թեան պատճառաւ կը մնար ալ նէ,
այսօր յարմար դատեցինք անոր հրատա-
րակուիլ:

ԱԽԵՏԱԲԵՐ ԵՒ ԻՐ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒ ՄԵԿ
ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի մէջ միշտ երկու կարգ ան-
ձինք կը տեսնուին, որ երբեք օրինաւոր
պատասխան տալ չեն գիտեր, կամ չեն
ուզեր տալ. — Մէյ մը՝ տգէտ ու անուս-
ները, որ կարդացածին հասկնալու կամ
դատելու անկարող ըլլալով յարմար ան-
յարմար խառնափնդոր դուրս կը թա-
փեն... Եւ մէյ մ'ալ մարդկութեան ան-
հարապատ զաւակները, կամ արամաթա-
նական լեզուով ըսենք՝ իմաստակները,
որ միշտ օձապտոյտ ծամբաներով խնդ-
րոյն գլխաւ որ կետերը ծածկելու, շփո-
թելու եւ ընթերցողները խաբելու կը
տքնին:

Աս երկու կարգի անձինքն ալ՝ մանա-
ւանդ վերջինը առանց ճշմարտութեան
եւ տրամաբանութեան ձայնին անսալու
եւ օրինաւոր պատասխան տալու սա հե-
տեւեալ տկար եւ փառք զնքերու կը
դիմէ ըսելով « հակառակութիւն եւ
թշնամութիւն ունի, անհասկները կը-
պարտաւէ ու կը նախատէ, սուտ կը խօսի
արդարասէր չէ » եւ այլն, որ հին ատե-
նի « հաւատքին հայհոյեց » էն տարբերչէ,
ոչ (հիմա ամէն մարդ գիտէ) աս տե-
տակ ներհատած խօսքերը ճշմարիտ փաստ
եւ իրաւունք չունենալէն կը ծագին, եւ
որ յայտնի տկարութեան նշան է:

Այս երկու կարգի անձանց վերջինը,
այն է իմաստակները, որ միշտ ճշմար-
տութիւնը ծածկել կը նկրտեն, մարդկու-
թեան մահաբոյր ժանապարհ են, եւ սոս-
կալի եակաց կարգը կը գաւառին:

Աւետարանի պատաւելի խմբագիրը,
որ մինչեւ ցարդ արաւմաթաւութիւնը,
ճմարտութիւնը եւ իրաւունքը առ ոսն
կոխելու լանդգնելով իմ հափքմանցս առ-
ջեւէն փոխուած կուտար, եւ խնդիրը չը-
փոթելու ջանալով ընթերցողները խաբե-
լու կաշխատէր, այս անգամ գլխովն մի-
ջն դարու իմաստակութեան նոր տեսա-
րան մը կը բանայ Աւետարանի 258 թուոյն
մէջ իրրեւ պատասխան իմ՝ Մանգու մէի
567 թուոյն մէջ գրած ձեկ յօդուածիս.
գոր կրկին անգամ կարդացողը պարզօրէն
պիտի տեսնէ թէ պատաւելին մինչեւ ուր
տեղուանք ինկած է, եւ հոն զանազան
մարդոց զանազան ատեն զրածները եւ

խմբագրին ըսածը ի՛նչ նուստ կերպիւ իրարու հետ խառնած եւ չփոխած է։ Եւ աս ապօրինաւոր չփոխումը տեսնողս եւ իցէ ուշիմ անձ այնպէս պիտի կարծէ թէ։ Նոյն յօդուածը զրոյ պատուելին՝ կամ տակ տգէտ մ'է, կամ իմաստակ մ'է եւ կամ մարդկութեան աշխարհէն դուրս նոր տեսակ իրաւագիտութիւն եւ տրաւ մարանութիւն դաս առած լինելով՝ ուրիշ էակ մը լինելու է։ Քանզի արդէն համոզուած ենք որ՝ Ամերիկայի տրամաբանութեան ու իրաւագիտութեան եւ հոս տեղի տրամաբանութեան ու իրաւագիտութեան մէջ տեղ սարբերութիւն չկայ։ Բայց աս պատուելիինը շատ տարբեր է։ Պարզեմ ըսածս։ —

Պատուելի խմբագիրը «Մանգուլեթի» 567 թիւոյն մէջ խոսքով ստորագրութեամբ հրատարակուած նամակ մը քննարկելով կոկոր, բայց փոխանակ այն յօդուածին մէջ յիշուածները օրինաւոր փաստերով շնորհակալ չլինելով Պօրտ ընկերութեան եւ անոր միսիօնարներուն դէմ սխալ եւ պարսաւադիր խօսքեր կը պարունակէր ըսելով՝ միայն մէկ կէտ կը յիշէ (որ է Պօրտ ընկերութեան ինչ ինչերը) եւ այն առանց համոզել փաստերով ջրելու։ (Թէ եւ աս մասին միսիօնարի վկայութիւնը մարդկային արդարաւորապէս նին առջեւ ընդունելի չէ, թող որ՝ իրմէ աւելի հաւատարիմ ճանչցուած Զերուհի միսիօնար մը հրապարակուած «Պու միսիօնարական Պօրտ ընկերութիւնը պիղ թէշքի իթաիք, պիւ գրաւորդ աւետարան քարոզել իթ մէկ չքաղք, վէ պիւ գրս, մըմըգ ապիս օրատա աղչէ տեղիոմէլէ տեղամ» իթ մէկքաւ տիւ եւն ըսած է ո)։ մէյ մը Մանգուլեթի վրայ կը յարձակ իր տկար եւ խօսքարեան փաստաբանութեամբ անոր հանրածանօթ պատիւն ու արդարաւորութիւնը արատաւողելու մէյ մը Սամսոնի նամակագրին վրայ կը յարձակի՝ անոր յառաջ ընթաց եւ ամենուն գիտցած մէկ ճշմարտութիւնը օտելու եւ մէյ մայ յարմար անյարմար փառած եւ տղայական գրպարութիւններու կը կրուի ընել, իրեւ թէ աս հին դարու նեխտած խօսքերը կարող ըլլային ճշմարտութեամբ եւ սուտը ճշմարտի ճերմակը սեւ եւ սեւը ճերմակ, եւն ընելու։

Մենք պատուելի խմբագրէն օրինաւոր պատասխան կը տալու թէ։ Բայց նա, փոխանակ ինքզինքը տրամաբանական եւ իրաւագիտական օրինօք պաշտպանելու եւ Մանգուլեթի մէջ իր դէմ հրատարակուած ներուն ըստ օրինի պատասխանելու։ Մանգուլեթի ազատ եւ անկախ իրաւաստութեանը դէմ կը յարձակի ու անիրաւ տեղը կը նստաւ։ Եւ այն լրագիրը իր սխալները միսիօնարաց դէմ գրուած գանգաւներով կրկին եւ կրկին կը լեցունէ։ Ան

հատկութեւ գեմ յարձակումներ հրատարակել... աս եւ ասպի է Մանգուլեթի արդարաւորութիւնը։ Այսպիսի թերթ մը ազատամիտ մարդոց քով չը կրնար վարկ եւ համարում ունենալ ուստի մենք (միսիօնարք) այսուհետեւ անոր մէջ հրատարակուածներուն կարեւորութիւն տալու հարկ չենք տեսներ» ըսելով։

Մանգուլեթի Երբէ

ՎԵՋԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ՃԱՆԱՊԱՐԶՈՐՈՒԹԻՒՆ

Մանգուլեթի 590 ընդ նիւթիւնէն պէտքէ

Մայիս 9, երեքշաբթի օրը մեծ հանդէսով եւ բազմութեամբ ջերմեռանդն Հայ ժողովրդեան (որոնց ճանապարհին գրեթէ անդադար չկեցցէ զոռալուսն երկինք արձագանք կուտար), մտաւ Վեճ. Կաթողիկոսը Երեւան քաղաք, եւ եկեղեցական թափորով ջանաց Ս. եկեղեցին երթալով՝ աղօթքէն ու երկրպագութենէն զկնի, համառօտ առնաբանութիւնով օրնեց եւ մը խիթարեց ժողովուրդը՝ մեծապէս շնորհակալ ըլլալով անոնց ջերմեռանդն համակրութիւններէն։ Եւ յետոյ վանքը երթալով հանգըստանալով, ընդունեց համայն Հայ երեւելեաց նահանգապետին՝ Հայ քաղաքապետին եւ ուրիշ Հայ ու Ռուս աստիճանաւորաց ու պաշտօնաւորաց եւ զօրապետաց այցելութիւնները։ Այն տեղ փութացին գալ Գերտեղապան եւ Ս. Սինթի մի քանի անդամները՝ Վեճ. Կաթողիկոսին միաբանութեան կողմանէ իրենց յարգանքը տալու եւ նորին Վեհափառութեան գալուստը զիմաւորելով շնորհաւորելու, եւայլն։ Այն տեղ ալ Վեճ. Կաթողիկոսը բերել տալով Հայոց վարժարանին աշակերտքը, քննեց նոցա ուսմանց վիճակը, եւ պատուիրեց Ազգ. երեւելեաց մեծ ինսպեքտանի իրենց զաւակաց բարի կրթութեանց եւ լաւ ուսումնաւորութեանց մանաւանդ ապաւել եւս Հայկազան մայրենի լեզուին եւ խոստացաւ իրենց վարժարանին յառաջադիմութեանը համար փորձեալ հրահանգներ եւայլն ապա Ս. Էջմիածնէն։ Այն տեղ քանի մը ազգային գործոց մասին ալ պատուէրներ տալով հարկաւոր մարդիկներու։

Մայիս 12, մեկնեցաւ Վեճ. Կաթողիկոսը Երեւանէն ուղեկցութեամբ բաւական բարձրաստիճան հոգեւորականաց եւ աշխարհականաց եւ Հայազն ժողովրդին, որոնք իրենց արտերուն ուրախութենէն եւ միսիթարութենէն (ինչպէս Թիֆլիզէն մինչեւ Երեւան ըրին) հրացաններ պարպելով եւ ձիարշաւ խաղալով եւ զանազան քաջ կրթութիւններ ընելով ձիոց վրայ մեծ միսիթարութիւն եւ հրճուած կզգային։ Եւ այսպէս մէկ ու կէս ժամէ ետեւ ժամը երեք ու կեսին հասաւ Ս. Էջմիածին, եւ պարսպին դրան առջեւ համայն միաբանութիւնը եւ կեղեցական յոյժ շքեղ եւ փառաւոր հանդէս կազմած զիմաւորեցին Կաթողիկոսը, եւ շարականաց երգօք տարին Ս. Կաթողիկէ Էջմիածին, ուր ան օր Վեհափառ աղօթ

թելով եւ արտասուելից աչօք երկրպագութիւն նուիրելով իջման Ս. տեղւոյն, եւ միաբանութեան մի ճառը մօրիկ ընելէն վերջը, կարճ քարոզով մը ողջոյն տալով միաբանութեան եւ ժողովրդին միսիթարեց զանոնք եւ օրհնեց։ (Ա.) Եւ Ս. Էջմիածնի եւայլն։ Եւ յետոյ Վեհաբանը գալով հանգստացաւ ուր միաբանութեան եւայլն այցելութիւնը սիրով վերնդունեցաւ։ Ս. Էջմիածին եկած կապաւէին Ռուսաստանի ամեն Հայաբնակ քաղաքներէն եւ գաւառներէն հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներ։ Նաեւ Տաճկաստանէն, Ռուսաստանէն եւ Պարսկաստանէն ոչ սակաւ ուխտաւորներ կային եւ մէկ կողմէն կուգային։

Մայիս 21, Վեճ. Կաթողիկոսին Ս. Օծման հանդէսը փառաւորապէս կատարուեցաւ Ս. Էջմիածնի տաճարին մէջ։ Այս հանդէսին ներկայ էին տասն եւ չորսիւ չափ արքեպիսկոպոսոսնք եւ եպիսկոպոսոսնք, վաթսունէն աւելի վանահարք՝ վարդապետք եւ քահանայք, բազմաթիւ ժողովուրդ, որ տաճարը անոնց բազմութեան չէր բաւեր։ Նոյն օրը նուագածու զօրականներով կայսերական գունդ մը կանոնաւոր զօրք Հայ զօրապետով մը գալով ի պատիւ Կաթողիկոսին, օծման ժամանակը զգուշութիւն եւ պահպանութիւն ընելէ զատ, հանդէսին աւարտելէն զկնի Վեճ. Կաթողիկոսին Տաճարէն եւ ժամանակ կարգով շարուած, Նորին արքայնութիւնը իրենց մէջէն անցած ժամանակ նուագարաններով պատուեցին եւ բարեւեցին։ Նոյն օրը մինչեւ կէս գիշեր կայսերական նուագածու զօրականքը նուագեցին եւ այն օրը մեծ հացկերոյթով շքեղ հանդէսներ կատարելով, բերկրապատար օւրախութիւններով միաբանութիւնը մեծապէս կը միսիթարուէր, եւ երեկոյն ալ լուսավառութիւններ եւ հրավառութիւններ եղան, իսկ ժողովրդին երեսաց վրայ փայլած հրճուածք եւ մը խիթարութիւնը, եւ իրենց արտիք քաղցր զգացումէն եւ համակրութենէն ի պատիւ Կաթողիկոսին հրացաններ պարպելով լաճախ չկեցցէ ճներ գոչելով իրենց հեծելը տեսնալու եւ յիշատակութեան արժանի էր։

Յունիս 1, Վեճ. Կաթողիկոսը եպիսկոպոս ձեռնադրեց հետեւեալ վարդապետները որք են, Յովհաննէս Սեթեան, Գաբրիէլ Ալվազեան, Սիմէօն Սէֆէրեան՝ փոխատեղ Ս. Երուսաղեմայ, խորէն Գալֆայան՝ եւ Պետրոս (Կաթողիկոսին բազմամեայ աշխատաւորը)։ (1) Վեճ. Կաթողիկոսը խաբ Ս. Էջմիածին հասնելէն վերջը՝ սկսաւ զբաղիլ ընդհանուր Ազգին հոգերով, եւ պետք եղած տեղեկութիւններ օտանալ, եւ անոնց համար խորհուրդներ ընել եւ ըստ այնմ տնօրէնութիւններ եւ բարեկարգութիւններ հրամայել եւ պատուիրել, եւ զանազան կար-

(Ա) Եւ Ս. Էջմիածնի Տաճարէն երեկոյ Տաճարին դրան աջ կողմը (դէպի հարաւ) լուսահոգի Ներսէս Կաթողիկոսին դերեղմանին վրայ հանդիսաւոր պաշտօն կատարեց։

(1) Յունիս 8 Տաճկաստանի ուղեկց պատգամաւորները (բաց ի մեկէն) վերադարձան Ս. Էջմիածնէն։

